



Մ Ր Ց ՈՒ Ն Ա Կ ՈՒ Թ Յ Ա Ն
Հ Ա Մ Ա Շ Խ Ա Ր Հ Ա Յ Ի Ն
Զ Ե Կ ՈՒ Յ Ց
2011-2012

«Տնտեսություն եւ արժեքներ»
հետազոտական կենտրոն

Երևան, սեպտեմբերի 7, 2011 թ.



Մրցունակության չափումը

- ՀՏՖ-ի Մրցունակության համաշխարհային զեկուլցր (ՄՀԶ)
 - երկրների մրցունակության չափման առաջատար և ամենահամապարփակ աղբյուրներից մեկն է,
 - օգտագործում է ինչպես վիճակագրական տվյալներ, այնպես էլ հետազոտությունների արդյունքում ստացված տվյալներ (առանձին երկրներում ղեկավարների կարծիքի հարցումներ):
- ՄՀԶ շրջանակում երկրների մրցունակությունը չափվում է ըստ Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ ցուցիչ):
 - Համաշխարհային մրցունակության ցուցիչը երկրների մրցունակության գնահատման ընդգրկուն ցուցանիշ է, որը հաշվարկվում է ավելի քան 110 գործոնների հիման վրա` ներառելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են մակրոտնտեսությունը, առողջապահությունը և կրթությունը, գործարարության կատարելագործվածությունը, նորարարությունները և այլն:
- ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպությունը Հայաստանում **«Տնտեսություն և արժեքներ»** հետազոտական կենտրոնն է, որը 2005 թվականից ի վեր աջակցում է ՀՏՖ-ի` Հայաստանի մասով հետազոտություններին:



Մրցունակության համաշխարհային զեկույց 2011-12

- Համաշխարհային տնտեսությունը գրանցում է առաջընթաց ձգնաժամի հետևանքներից վերականգնման փորձի մեջ, այնուամենայնիվ, հաջողությունները ոչ հավասարաչափ են բախշված երկրների միջև: Մինչ զարգացող երկրները ցուցաբերում են համեմատաբար կայուն աճի միտումներ, զարգացած երկրները դեռևս բնութագրվում են թույլ դինամիկականությամբ և խոցելիությամբ տնտեսական նոր ցնցումների նկատմամբ:
- Դանդաղ և անկայուն տնտեսական վերականգնման տեմպերը զարգացած երկրներում բավարար չեն լուծելու ձգնաժամի տարիներին կուտակված զբաղվածության բարձր մակարդակի խնդիրը: Պետական պարտքի մեծ բեռը և ֆինանսական շուկաների անկայունությունը անորոշության մեծագույն գործոններից են:
- Ջեկույցը, անդրադառնալով համաշխարհային տնտեսական միջավայրում ներկայումս տիրող համակարգային խնդիրներին, եզրակացնում է, որ տնտեսական կայունության և առաջընթացի համար անխուսափելի է որակական և երկարաժամկետ հիմնահարցերի կարևորումը, ի հավելումն քանակական և կարճաժամկետ խնդիրների:
- ՄՀԶ 2011-12 զեկույցը զգալի բարելավում է արձանագրել Հայաստանի մրցակցային կատարողականի մեջ:



Մրցունակության համաշխարհային ցուցիչ. 12 հենասյուները

Հիմնական
պայմաններ

- 1
- 2
- 3
- 4

Ինստիտուտներ

Ենթակառուցվածքներ

Մակրոտնտեսական կայունություն

Առողջապահություն եւ տարրական կրթություն

Արդյունավետության
խթաններ

- 5
- 6
- 7
- 8
- 9
- 10

Բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում

Ապրանքների շուկայի արդյունավետություն

Աշխատուժի շուկայի արդյունավետություն

Ֆինանսական շուկայի արդյունավետություն

Տեխնոլոգիական պատրաստվածություն

Շուկայի չափ

Նորարարության և
կատարելագործվածության
գործոններ

- 11
- 12

Գործարարության կատարելագործվածություն

Նորարարություն



Մ
Ը
ՈՒ
Ն
Ա
Կ
ՈՒ
Թ
Յ
ՈՒ
Ն




Տնտեսական զարգացման փուլերն ըստ ՄՀԶ-ի

| Տնտեսական զարգացման փուլ | Մեկ շնչին ընկնող ՀՆԱ | Արտահանման ռեսուրսափնտեսիվություն |
|---|----------------------|-----------------------------------|
| ՓՈՒԼ 1. Ռեսուրսների վրա հիմնված փուլ | < 2.000 | <p>>90 % >70 %</p> |
| <i>Անցում փուլ 1-ից 2-ը</i> | <i>2.000-3.000</i> | |
| ՓՈՒԼ 2. Արդյունավետության վրա հիմնված փուլ | 3.000-9.000 | |
| <i>Անցում փուլ 2-ից 3-ը</i> | <i>9.000-17.000</i> | |
| ՓՈՒԼ 3. Նորարարությունների վրա հիմնված փուլ | >17.000 | |



Երկրների տնտեսական զարգացման փուլերը ըստ ՄՀԶ-ի



Տարբեր տնտեսական զարգացման փուլերում գտնվող տնտեսությունների համար ՀԱՄ-ն հաշվարկելու համար տնտեսական ցուցանիշների նկատմամբ կիրառվում են տարբեր կշիռներ



Աշխարհի առաջին 15 ամենամրցունակ երկրները

| 1-15 երկրները | ՀԱՄ 2011–12 Տեղ | ՀԱՄ 2010–11 Տեղ |
|---------------|--------------------|--------------------|
| Շվեյցարիա | 1 | 1 |
| Սինգապուր | 2 | 3 |
| Շվեդիա | 3 | 2 |
| Ֆինլանդիա | 4 | 7 |
| ԱՄՆ | 5 | 4 |
| Գերմանիա | 6 | 5 |
| Նիդեռլանդներ | 7 | 8 |
| Դանիա | 8 | 9 |
| Ճապոնիա | 9 | 6 |
| Մեծ Բրիտանիա | 10 | 12 |
| Հոնկոնգ | 11 | 11 |
| Կանադա | 12 | 10 |
| Թայվան | 13 | 13 |
| Քաթար | 14 | 17 |
| Բելգիա | 15 | 19 |



Հայաստանն իր մրցունակությամբ 92-րդն է 142 երկրների շարքում

| Երկիր | ՀԱՄ 11-12 Տեղ | Փոփ.* |
|----------------------|---------------|-------------|
| Ուկրաինա | 82 | ↗ |
| Նամիբիա | 83 | ↘ |
| Գվատեմալա | 84 | ↘ |
| Արգենտինա | 85 | ↗ |
| Հոնդուրաս | 86 | ↗ |
| Ալժիր | 87 | ↘ |
| Վրաստան | 88 | ↗ |
| Լիբանան | 89 | ↗ |
| Հունաստան | 90 | ↘ |
| Էլ Սալվադոր | 91 | ↘ |
| Հայաստան | 92 | ↗ +6 |
| Մոլդովա | 93 | ↗ |
| Եգիպտոս | 94 | ↘ |
| Սերբիա | 95 | ↗ |
| Մոնղոլիա | 96 | ↗ |
| Կամբոջա | 97 | ↗ |
| Սիրիա | 98 | ↘ |
| Գամբիա | 99 | ↘ |
| Բոսնիա և Հերցեգովինա | 100 | ↗ |
| Էկվադոր | 101 | ↗ |
| Քենիա | 102 | ↗ |

* Փոփոխությունը ըստ ՄՀԶ 2010-11 երկրների շարքի:



Հայաստանի համեմատական դիրքը զարգացման I-ից II փուլ անցման ենթախմբում


ՓՈՒԼ 1
Ռեսուրսների վրա
հիմնված փուլ



Անցում
1-2

ՓՈՒԼ 2
Արդյունավետության
վրա հիմնված փուլ

Անցում
2-3

ՓՈՒԼ 3
Նորարարությունների
վրա հիմնված փուլ



 Հայաստան
  Փուլ 1-ից 2 անցման երկրներ



Հայաստանի գնահատականներն ըստ հենասյուների և փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ

| ՀԱՄ հենասյուները | ՀԱՄ 2011–12 տեղ 142 երկրների շարքում | ՀԱՄ 2010–11 տեղ 139 երկրների շարքում | Փոփոխություն |
|---|--|--|--------------|
| Ինստիտուտներ | 83 | 97 | ↗ +14 |
| Ենթակառուցվածքներ | 77 | 90 | ↗ +13 |
| Մակրոտնտեսական միջավայր/կայունություն | 114 | 99 | ↘ -15 |
| Առողջապահություն եւ տարրական կրթություն | 94 | 93 | ↘ -1 |
| Բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում | 76 | 91 | ↗ +15 |
| Ապրանքների շուկայի արդյունավետություն | 108 | 113 | ↗ +5 |
| Աշխատուժի շուկայի արդյունավետություն | 34 | 47 | ↗ +13 |
| Ֆինանսական շուկայի արդյունավետություն | 95 | 110 | ↗ +15 |
| Տեխնոլոգիական պատրաստվածություն | 88 | 108 | ↗ +20 |
| Շուկայի չափ | 115 | 116 | ↗ +1 |
| Գործարարության կատարելագործվածություն | 107 | 109 | ↗ +2 |
| Նորարարություն | 112 | 116 | ↗ +4 |



Հայաստանի վարկանիշերում արձանագրված ամենաուշագրավ փոփոխությունները

| Ցուցանիշ | Տեղ ըստ ՄՀԶ 2011-12 | Փոփոխություն |
|---|------------------------|--------------|
| Ինստիտուտներ | | |
| Պետական կարգավորման բեռը | 52 | ↗ +39 |
| Պետական քաղաքականության թափանցիկությունը | 35 | ↗ +18 |
| Ենթակառուցվածք | | |
| Բջջային հեռախոսակապի բաժանորդագրությունը | 33 | ↗ +48 |
| Երկաթուղային ենթակառուցվածքը | 69 | ↗ +10 |
| Մակրոտնտեսական միջավայր/կայունություն | | |
| Պետական բյուջեի հաշվեկշիռը | 92 | ↗ +21 |
| Գնաձ | 119 | ↘ -41 |
| Համախառն ազգային խնայողություններ | 76 | ↘ -27 |
| Բարձրագույն կրթություն եւ վերապատրաստում | | |
| Միջնակարգ կրթության ներգրավվածությունը | 52 | ↗ +17 |
| Բարձրագույն կրթության ներգրավվածությունը | 49 | ↗ +19 |
| Կրթական համակարգի որակը | 97 | ↗ +18 |
| Ղարոցներում ինտերնետի հասանելիությունը | 92 | ↗ +15 |




Հայաստանի վարկանիշերում արձանագրված ամենաուշագրավ փոփոխությունները

| Ցուցանիշ | Տեղ ըստ ՄՀԶ 2011-12 | Փոփոխություն |
|--|---------------------|--------------|
| Ապրանքների շուկայի արդյունավետություն | | |
| Հարկային քաղաքականության ազդեցություն | 65 | ↗ +19 |
| Հարկային դրույքաչափ (% շահույթից) | 74 | ↘ -18 |
| Դեպի սպառող կողմնորոշվածության աստիճանը | 113 | ↗ +21 |
| Ֆինանսական շուկայի արդյունավետություն | | |
| Վարկերի հասանելիությունը | 85 | ↗ +39 |
| Ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը | 71 | ↗ +33 |
| Ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը | 102 | ↗ +19 |
| Տեխնոլոգիական պատրաստվածություն | | |
| Ինտերնետ օգտագործողների թիվը | 68 | ↗ +43 |
| Լայնաշերտ ինտերնետի բաժանորդագրությունը | 86 | ↗ +22 |
| Ժամանակակից տեխնոլոգիաների հասանելիությունը | 116 | ↗ +11 |



Հայաստանի ՀԱՄ դիրքի դինամիկան (2005-2011)





Հայաստանի 10 ուշագրավ առավելություններն ու թերությունները

| Ուշագրավ առավելություններ | Տեղ | Ուշագրավ թերություններ | Տեղ |
|---|-----|--|-----|
| Մալարիայի ազդեցությունը գործարարության վրա | 1 | Տեղական մրցակցության ուժգնությունը | 139 |
| Մալարիայի դեպքերի քանակը | 1 | Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը | 138 |
| Ահաբեկչության հետևանքով գործարարության ծախսերը | 17 | Շուկայում գերիշխող խմբերի առկայությունը | 133 |
| Աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպը | 18 | Մաքսային գործընթացների բեռը | 132 |
| ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի տարածվածությունը | 21 | Բիզնես կրթություն (դպրոցների որակ) | 131 |
| Աշխատանքից ազատման ծախսերը (շաբաթական աշխատավարձի տեսքով) | 21 | Արտասահմանյան շուկաների չափի ինդեքս | 127 |
| Հանցագործությունների և բռնության հետևանքով գործարարության ծախսերը | 25 | Բուհ-արդյունաբերություն համագործակցությունը ՀուՄ-ի մեջ | 125 |
| Բջջային հեռախոսակապի բաժանորդագրություն | 33 | Տեխնոլոգիական ապրանքների պետական գնումներ | 124 |
| Նոր բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը | 34 | Արժեքային շղթայի ընդգրկունությունը | 121 |
| Մաքսադրույքների չափը | 34 | Փոքրամասնական բաժնետերերի շահերի պաշտպանություն | 120 |



Հայաստանի դիրքը Վրաստանի և ԱՊՀ երկրների շարքում

| ԱՊՀ երկրներ | ՀԱՄ 2011–12 Տեղ | ՀԱՄ 2010–11 Տեղ | Փոփոխություն |
|-----------------|--------------------|--------------------|--------------|
| Ադրբեջան | 55 | 57 | ↗+2 |
| Ռուսաստան | 66 | 63 | ↘-3 |
| Ղազախստան | 72 | 72 | 0 |
| Ուկրաինա | 82 | 89 | ↗+7 |
| Վրաստան | 88 | 93 | ↗+5 |
| Հայաստան | 92 | 98 | ↗+6 |
| Մոլդովա | 93 | 94 | ↗+1 |
| Տաջիկստան | 105 | 116 | ↗+11 |
| Ղրղզստան | 126 | 121 | ↘-5 |



ՀԱՄ ենթացուցիչների գնահատականը ԱՊՀ երկրների և Վրաստանի համար

| | Երեք ենթացուցիչները | | | |
|-----------------|---------------------|--------------------|-----------------------------|-------------------------|
| | ՀԱՄ | Հիմնական պայմաններ | Արդյունավետության խթանիչներ | Նորարարության գործոններ |
| Երկիր | Տեղ | Տեղ | Տեղ | Տեղ |
| Ադրբեջան | 55 | 59 | 77 | 67 |
| Ռուսաստան | 66 | 63 | 55 | 97 |
| Ղազախստան | 72 | 62 | 76 | 114 |
| Ուկրաինա | 82 | 98 | 74 | 93 |
| Վրաստան | 88 | 86 | 89 | 117 |
| Հայաստան | 92 | 94 | 91 | 110 |
| Մոլդովա | 93 | 102 | 103 | 127 |
| Տաջիկստան | 105 | 106 | 118 | 100 |
| Ղրղզստան | 126 | 131 | 115 | 138 |



Հայաստանի մրցունակության հիմնախնդիրները հանրային-մասնավոր հարթություններում

- Հայաստանի տնտեսական կատարողականի և մրցունակության վերաբերյալ հասարակական քննարկումները սովորաբար ընթանում են հանրային ոլորտի հարցերի շուրջ և կենտրոնանում են այն խնդիրների վրա, որոնք ենթակա են պետական կարգավորման:
- Այնուամենայնիվ, Մրցունակության համաշխարհային զեկույցի ամենամյա վերլուծությունները ցույց են տալիս, որ հիմնախնդիրները համակարգային են: Մասնավոր հատվածը ևս լի է ֆունդամենտալ խնդիրներով, որոնք հանգեցնում են ցածր արտադրողականության և ոչ բավարար կատարողականի:
- Մասնավոր հատվածին բնորոշ առավել ակնառու խնդիրները կապված են հետևյալ հիմնական ուղղությունների հետ`
 - Կորպորատիվ կառավարում
 - Տեխնոլոգիաների օգտագործում, ՀուՄ
 - Պրոֆեսիոնալ կառավարիչների ներգրավում և անձնակազմի վերապատրաստում
 - Քլաստերային զարգացում
 - Ֆինանսական շուկաների զարգացվածություն



Հայաստանի մրցունակության հիմնախնդիրները երկարաժամկետ-կարճաժամկետ հարթություններում

- Մրցունակության վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի ամենամեծ խնդիրները թե՛ երկարաժամկետ (այս բնույթի ցուցանիշների ~40%-ը վարկանիշով 100-րդ տեղից ցածր է), և թե՛ կարճաժամկետ բնույթի են (այս բնույթի ցուցանիշների ~30%-ը վարկանիշով 100-րդ տեղից ցածր է):
- Այս փաստը ևս մեկ անգամ ընդգծում է՝ կարճաժամկետ խնդիրների շեշտադրումը չի կարող տալ շրջադարձային արդյունք երկրի մրցունակության բարձրացման քաղաքականության մեջ:
- Երկարաժամկետ բնույթ կրող Հայաստանի առանցքային հիմնախնդիրները հետևյալ ասպարեզներում են՝
 - Պրոֆեսիոնալ կորպորատիվ կառավարում
 - Կրթական համակարգ
 - Ընկերությունների կողմից տեխնոլոգիաների օգտագործում
 - ՀուՄ կարողություններ
 - Քլաստերային զարգացում
 - Արտաքին շուկաների հասանելիություն